

AVC

Consulting&Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ»ՍՊԸ

**«ՉԻՆՎՈՐԻ ՏՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

2023թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆԻՍ- 2024**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|---|
| Ղեկավարության հայտարարությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ախարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ | 2 |
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն..... | 5 |
| Գործունեության մասին համախմբված հաշվետվություն..... | 6 |
| Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն..... | 7 |
| Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն..... | 8 |
| Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ..... | 9 |

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2023 Թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱԾ ՀԱՄԱՆՍԱՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Ձինվորի տուն» բարեգործական ՀԿ-ի և իր դուստր ընկերության (այսուհետ՝ Խումբ) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, ՓՄԿ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ-ի ՖՀՄՍ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- ✦ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- ✦ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- ✦ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՓՄԿ-ի ՖՀՄՍ հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Խմբի ֆինանսական վիճակի մասին,
- ✦ Խմբի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ✦ Խմբում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ✦ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Խմբի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Խմբի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ներին,
- ✦ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ✦ Խմբի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- ✦ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2024թ. հունիսի 27-ին:

Նախագահ՝



Հաշվապահական հաշվառման
ծառայություններ մատուցող ընկերության
ներկայացուցիչ՝

Հ. Մինասյան

Հովհաննիսյան

2024թ. հունիսի 27
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ԷՅՎԻՍԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ



Consulting&Audit

ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՏ -02.08.2006թ. ՏՐՎԱԾ Է ԱՆԺԱՄԿԵՏ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ 1 20 0440

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Զինվորի տուն» բարեգործական ՀԿ-ի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Զինվորի տուն» բարեգործական ՀԿ-ի և իր դուստր ընկերության (այսուհետ՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀԿ-ի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՄ) պահանջների համաձայն:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԻ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

2022թ ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, ուստի մենք հիմք ենք ընդունել Խմբի կողմից տրամադրված հաշվապահական տեղեկատվությունը: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Խմբի 2022թ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, այդ պատճառով մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Խմբի 2022թ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ի ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յրումն մենք՝

- ✦ հասկողորդում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✦ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✦ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարացիայի կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք դեկլարացիայի կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորվել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,


Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

27 հունիսի 2024թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր



Լ. Սարգսյան

**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|-------|------------------------------------|------------------------------------|
| ԱԿՏԻՎ | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 1 771 074 | 1 836 984 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 598 | 412 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 19 | 8 825 | 7409 |
| Տրված ոչ ընթացիկ կանխավճարներ | | 163 | 22 808 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | | 1 780 660 | 1 867 613 |
| Պաշարներ | 6 | 396 709 | 409 414 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 146 812 | 194 657 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 37 260 | 98 934 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | | 580 781 | 703 005 |
| | | 2 361 441 | 2 570 618 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | | | |
| ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Կուտակված արդյունք | | (30 545) | 446 |
| Ընդամենը զուտ ակտիվներ | | (30 545) | 446 |
| Երկարաժամկետ վարկեր | 9 | 92 022 | - |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 1 770 926 | 1 836 836 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | | 1 862 948 | 1 836 836 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 9 | 3 817 | 20 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 11 | 190 533 | 172 817 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 10 | 285 657 | 519 335 |
| Պահուստներ | 12 | 49 031 | 41 164 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | | 529 038 | 733 336 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 2 361 441 | 2 570 618 |

Նախագահ՝

Հ. Մինայան



Հաշվապահական հաշվառման
ծառայություններ մատուցող
ընկերության ներկայացուցիչ՝

Լ. Հովհաննիսյան

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Չինվորի տուն» բարեգործական ՀԿ-ի կողմից 2024թ. հունիսի 27-ին:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-23)

**Գործունեության մասին համախմբված հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ | 2023թ | 2022թ |
|---|-------|------------------|------------------|
| Ապրանքի վաճառքից հասույթ | 13 | 7 552 | 27 941 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 13 | 882 356 | 693 164 |
| Մատուցված ծառայությունների ինքնարժեք | 13 | (1 249 149) | (1 106 071) |
| Համախառն շահույթ | | (359 241) | (384 966) |
| Իրացման ծախսեր | 14 | (19 198) | (23 108) |
| Վարչական ծախսեր | 15 | (306 082) | (336 916) |
| Այլ եկամուտ | 16 | 822 352 | 1 062 140 |
| Այլ ծախսեր | 16 | (130 527) | (325 240) |
| Այլ օգուտ | 17 | 324 | 7 170 |
| Այլ կորուստ | 17 | (15 879) | (7 228) |
| Ընդամենը տարվա արդյունք մինչև հարկերը | | (8 251) | (8 148) |
| Շահութահարկի գծով (ծախս) / օգուտ | 19 | (1 259) | 3 466 |
| Ընդամենը տարվա արդյունք | | (9 510) | (4 682) |
| Վերագրելի՝ | | - | - |
| Փոքրամասնության բաժնեմասին վերագրելի | | - | - |
| Վերահսկող կազմակերպության սեփականատերերին վերագրելի | | (9 510) | (4 682) |


Նախագահ՝

Հ. Մինասյան




Հաշվապահական հաշվառման
ծառայություններ մատուցող ընկերության
ներկայացուցիչ՝

Լ. Հովհաննիսյան



Գործունեության մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների թողկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Լջ 9-23)

**Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**


Հազար ՀՀ դրամ

| | <u>Կուտակված արդյունք</u> | <u>Ընդամենը</u> |
|--|---------------------------|-----------------|
| 2022թ հունվարի 1-ի դրությամբ | 33 118 | 33 118 |
| Տարվա արդյունք | (4 682) | (4 682) |
| Տեղափոխում շնորհների հաշվին | (27 990) | (27 990) |
| 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 446 | 446 |
| 2023թ հունվարի 1-ի դրությամբ | 446 | 446 |
| Տարվա արդյունք | (9 510) | (9 510) |
| Տեղափոխում շնորհների հաշվին | (21 481) | (21 481) |
| 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | (30 545) | (30 545) |

Նախագահ՝

 Հ. Սիսաչյան



Հաշվապահական հաշվառման
 ծառայություններ մատուցող ընկերության
 ներկայացուցիչ՝
 Լ. Հովհաննիսյան 

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-23)

**Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ամառային տարվա համար**

Հազար ՀՀ դրամ

| | 2023թ | 2022թ |
|---|-----------------|------------------|
| Դրամական միջոցների տարեկգրի մնացորդ | 98 934 | 168 796 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հանախորդներից ստացված դրամական միջոցներ | 917 642 | 720 635 |
| Ստացված դրամաշնորհներ և նվիրաբերություններ | 402 671 | 1 117 064 |
| Այլ մուտքեր | 3 430 | 16 571 |
| Ապրանքների ձեռքբերման, աշխատանքների, ծառայությունների ստացման համար վճարված դրամական միջոցներ | (338 588) | (983 880) |
| Աշխատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ | (764 786) | (622 559) |
| Վճարված հարկեր և պարտադիր վճարներ | (186 444) | (164 578) |
| Անհատույց տրված դրամական միջոցներ | (37 697) | (34 380) |
| Այլ վճարումներ | (10 195) | (13 119) |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (13 967) | 35 754 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերման գծով ելքեր | (82 037) | (206 532) |
| Ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով ելքեր | (350) | (160) |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (82 387) | (206 692) |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Ստացված վարկեր | 65 000 | - |
| Ստացված և տրամադրված փոխառություններից մուտքեր | 30 | 100 072 |
| Տոկոսային եկամուտ | 303 | 4 433 |
| Վարկերի մարումից ելքեր | (18 877) | - |
| Փոխառությունների տրամադրումից և մարումից ելքեր | (560) | - |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 45 896 | 104 505 |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ | (50 458) | (66 433) |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (11 216) | (3 429) |
| Դրամական միջոցների տարեվերջի մնացորդ | 37 260 | 98 934 |

Նախագահ՝

Հ. Մինասյան



Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝

Լ. Հովհաննիսյան

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթացիկ սպա համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-23)

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը

«Չինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ) ստեղծվել է 19.05.2017թ-ին: ՀԿ-ն ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպություն է:

ՀԿ-ի կանոնադրությունը գրանցվել է 2017թ ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 211.171.959032, հարկային հաշվառման համարը՝ 00904586: Կանոնադրության նոր խմբագրությունը գրանցվել է 2022թ.: ՀԿ-ի իրավաբանական հասցեն է ՀՀ, ք. Երևան, Աբովյան փ. 58 շ.:

- ՀԿ-ի կառավարման մարմիններն են՝
- ✦ ՀԿ-ի նախագահը (Նախագահ)

2023թ. վերջի դրությամբ Խմբի աշխատողների թիվը կազմել է 292 մարդ, 2022թ՝ 277 մարդ:

1.2 Հիմնական գործունեությունը

ՀԿ-ի հիմնական նպատակն է աջակցել զինձառայության կամ հայրենիքի պաշպանության ժամանակ առողջական խնդիրներ ստացած անձանց բուժմանն և առողջության վերականգնմանը, լուծել նրանց սոցիալական ինտեգրման, կրթական, իրավական, աշխատանքի տեղավորման խնդիրները:

ՀԿ-ն կանոնադրությամբ թվարկած նպատակները և խնդիրները հետապնդելիս կարող է իրականացնել ձեռնակատիրական գործունեության հետևյալ տեսակները. հինդանոցային և արտահիվանդանոցային բժշկական ծառայության մատուցումը, մասնավորապես՝

- ✦ ֆիզիոթերապևտիկ,
- ✦ վերականգնողական,
- ✦ հսկողություն,
- ✦ նյարդաբանական,
- ✦ հոգեթերապևտիկ,
- ✦ բժշկական ընդհանուր պրակտիկա:

ՀԿ-ն ունի գործունեության իրականացման հետևյալ լիցենզիաները՝

- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003742 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003432 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003465 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003231 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003588 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-002455 (անժամկետ),
- ✦ Լիցենզիա Կ-ԲՕ-003142 (անժամկետ):

ՀԿ-ն ունի մեկ դուստր ընկերություն՝ «Գեղեցկություն զինվորներից» ՍՊԸ-ն, որի կանոնադրությունը գրանցվել է 2021թ ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 273.110.1178881 (միասին՝ «Խումբ»), որի բաժնեմասն ամբողջությամբ իրեն է պատկանում:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՓՄԿ-ի ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ի ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Խմբի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ «Հ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Խմբի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՄ-ի համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի ՀԿ-ի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Խմբի մտադրություններին համապատասխան:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով:

Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|-----------------|
| <i>Ծներքեր (կապիտալացված ծախսեր)</i> | <i>10 տարի</i> |
| <i>Բժշկական սարքավորումներ</i> | <i>5 տարի</i> |
| <i>Տրանսպորտային միջոցներ</i> | <i>5 տարի</i> |
| <i>Համակարգիչներ, ՏՏ սարքավորումներ</i> | <i>1-3 տարի</i> |
| <i>Տնտեսական/Գրասենյակային գույք</i> | <i>5 տարի</i> |

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|------------------------------|------------------|
| <i>Համակարգչային ծրագրեր</i> | <i>3-10 տարի</i> |
|------------------------------|------------------|

Ոչ նյութական ակտիվն ապահանջվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապահանջումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապահանջվում է:

3.3 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը:

Չմարված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.4 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.5 Պաշարներ

Պաշարները՝ դեղեր, բժշկական պարագաներ և այլն չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» ԱՄԱԵ բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Բժշկական ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող դեղերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, քանի որ ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, իրացվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

Դեղերը կամ բժշկական պիտույքները, որոնց օգտագործման ժամկետը սպառվել է, կամ այլևս պիտանի չեն օգտագործման այլ հանգամանքներով, դուրս են գրվում համապատասխան ժամանակաշրջանում:

3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է.

ա. որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Խումբը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ. որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.7 Հասույթ

Կազմակերպության հասույթն առաջանում է բժշկական ծառայություններից, որոնց գծով հասույթը ճանաչվում է այդ ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում:

Կազմակերպության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանաձևից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով:

Խումբը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Խմբի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Շահութահարկ

Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

3.8 Ծնորհներ

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ կա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից պայմանները և, որ շնորհը ստացվելու է:

Ծնորհները ճանաչվում են որպես եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Խումբը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Ծնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Խմբին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Խումբը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

Խմբի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20-ում:

3.10 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից ստացվող գումարն է՝ իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները: Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Խումբը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել փոխհատուցվող գումարը:

Խումբը արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ Խումբը գնահատում է, թե առկա է արդյոք ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու

անկողմնակա վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակա վկայություն, Խումբը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի հաշվեկշռային արժեքը ավերացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը, սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարներին ակտիվի գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Խումբն արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

3.11 Համախմբման ընթացակարգեր

Դուստր ընկերություններ

Դուստր են համարվում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են «Գեղեցկություն զինվորներից» ՄՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունները: «Չինվորի տուն» բարեգործական ՀԿ-ն հանդիսանում է «Գեղեցկություն զինվորներից» ՄՊԸ-ի 100% սեփականատերը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում համախմբվում են ՀԿ-ի և դուստր կազմակերպության սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները, հաշվանցվում է դուստր կազմակերպությունում ՀԿ-ի ներդրման հաշվեկշռային արժեքը և դուստր կազմակերպությունն սեփական կապիտալում ՀԿ-ի բաժինը, ամբողջությամբ բացառվում են ներխմբային ակտիվներն ու պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք վերաբերում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

3.12 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Հիմնական միջոցներ

| Հազար << դրամ | Կառուցվածքներ | Մեքենա-սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Արտադրանքային, տնտեսական գույք | Բժշկական գործիքներ | Այլ հիմնական միջոցներ | Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ | Այլ ոչ քննարկվող նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---------------------------------|---------------|-----------------------|------------------------|--------------------------------|--------------------|-----------------------|--|-------------------------------------|-----------|
| <i>Միջանկյալ պլան</i> | | | | | | | | | |
| Առ 1 հունվարի 2022թ. | - | 898 470 | 32 130 | 504 684 | 415 | 24 107 | 14 358 | 659 807 | 2 133 971 |
| Ավելացումներ | 116 449 | 306 470 | - | 69 013 | 26 | 504 | 412 884 | 63 899 | 969 245 |
| Նվազեցումներ | - | (6 353) | (4 488) | (1 530) | - | (31) | (63 899) | - | (76 301) |
| Առ 31 դեկտեմբերի 2022թ. | 116 449 | 1 198 587 | 27 642 | 572 167 | 441 | 24 580 | 363 343 | 723 706 | 3 026 915 |
| Առ 1 հունվարի 2023թ. | 116 449 | 1 198 587 | 27 642 | 572 167 | 441 | 24 580 | 363 343 | 723 706 | 3 026 915 |
| Ավելացումներ | - | 153 333 | - | 37 735 | 3 800 | 1 885 | 80 875 | - | 277 628 |
| Նվազեցումներ | - | (478) | - | (3 219) | - | (2) | (4 026) | - | (7 725) |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | 116 449 | 1 351 442 | 27 642 | 606 683 | 4 241 | 26 463 | 440 192 | 723 706 | 3 296 818 |
| <i>Կուտակված սաշխածույրքում</i> | | | | | | | | | |
| Առ 1 հունվարի 2022թ. | - | 555 856 | 12 321 | 121 368 | 194 | 18 093 | - | 99 206 | 807 038 |
| Ավելացումներ | 1 114 | 196 972 | 6 157 | 115 659 | 55 | 4 172 | - | 65 871 | 390 000 |
| Նվազեցումներ | - | (2 665) | (3 578) | (864) | - | - | - | - | (7 107) |
| Առ 31 դեկտեմբերի 2022թ. | 1 114 | 750 163 | 14 900 | 236 163 | 249 | 22 265 | - | 165 077 | 1 189 931 |
| Առ 1 հունվարի 2023թ. | 1 114 | 750 163 | 14 900 | 236 163 | 249 | 22 265 | - | 165 077 | 1 189 931 |
| Ավելացումներ | 5 822 | 147 467 | 4 881 | 109 804 | 528 | 1 283 | - | 68 935 | 33 8 720 |
| Նվազեցումներ | - | (260) | - | (2 400) | - | (247) | - | - | (2 907) |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | 6 936 | 897 370 | 19 781 | 343 567 | 777 | 23 301 | - | 234 012 | 1 525 744 |
| <i>Չուտ իաշխիկըրային պլան</i> | | | | | | | | | |
| Առ 31 դեկտեմբերի 2022թ. | 115 335 | 448 424 | 12 742 | 336 004 | 192 | 2 315 | 363 343 | 558 629 | 1 836 984 |
| Առ 31 դեկտեմբերի 2023թ. | 109 513 | 454 072 | 7 861 | 263 116 | 3 464 | 3 162 | 440 192 | 489 694 | 1 771 074 |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի 63950 հազար ՀՀ դրամի գրավադրված հիմնական միջոցներ: Այլ ընթացիկ ակտիվը ՀԿ-ի կողմից վարձակալած ակտիվի վրա կատարած կապիտալ բնույթի ծախսերն են, որը ՀԿ-ն հաշվառել է որպես առանձին ակտիվ:

5. Ոչ նյութական ակտիվներ

| Հազար ՀՀ դրամ | Համակարգչային ծրագրեր | Ընդամենը |
|---------------------------------|--------------------------|----------|
| <i>Սկզբնական արժեք</i> | | |
| 2022թ հունվարի 1-ի դրությամբ | 656 | 656 |
| Ավերացումներ | 160 | 160 |
| Նվազեցումներ | (185) | (185) |
| 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 631 | 631 |
| 2023թ հունվարի 1-ի դրությամբ | 631 | 631 |
| Ավերացումներ | 412 | - |
| Նվազեցումներ | (130) | (130) |
| 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 913 | 913 |
| <i>Կուտակված մաշվածություն</i> | | |
| 2022թ հունվարի 1-ի դրությամբ | 163 | 163 |
| Տարվա ծախս | 56 | 56 |
| 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 219 | 219 |
| 2023թ հունվարի 1-ի դրությամբ | 219 | 219 |
| Տարվա ծախս | 96 | 96 |
| 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 315 | 315 |
| <i>Չուտ հաշվեկշռային արժեք</i> | | |
| 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 412 | 412 |
| 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 598 | 598 |

6. Պաշարներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|-----------------|------------------------------------|------------------------------------|
| Նյութեր | 327 658 | 338 273 |
| Վառելիք | 154 | 13 |
| Պահեստամասեր | 679 | 697 |
| Ծինանյութ | 19 000 | 25 289 |
| Դեղորայք | 3 911 | 5 422 |
| Այլ | 45 307 | 39 720 |
| Ընդամենը | 396 709 | 409 414 |

2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված պաշարներ:

7. Անուտրային և այլ գեբիտորական պարտքեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|--|------------------------------------|------------------------------------|
| Դեբիտորական պարտքեր վաճառված ապրանքների, մատուցած ծառայությունների գծով | 12 404 | 16 130 |
| Տրված կանխավճարներ ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու համար | 129 972 | 148 186 |
| Այլ նպատակներով տրված ընթացիկ կանխավճարներ | 3 500 | 3 500 |
| Առհաշիվ տրված գումարներ | 507 | 843 |
| Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով | 515 | 25 779 |
| Դեբիտորական պարտքեր հարկերի և պարտադիր վճարների գծով | 403 | 133 |
| Տրամադրված կարճաժամկետ փոխառություններ | 236 | 86 |
| | 146 812 | 194 657 |

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|------------------|------------------------------------|------------------------------------|
| Բանկային մնացորդ | 36 873 | 98 387 |
| Կանխիկ միջոցներ | 387 | 547 |
| | 37 260 | 98 934 |

9. Ստացված վարկեր և փոխառություններ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|--|------------------------------------|------------------------------------|
| <i>Երկարաժամկետ մաս</i> | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 59 735 | - |
| Ֆին. վարձակալության գծով վճարվելիք գումարներ | 32 287 | - |
| | 92 022 | - |
| <i>Կարճաժամկետ մաս</i> | | |
| Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մաս | 3 817 | - |
| Ստացված կարճաժամկետ փոխառություններ | - | 20 |
| | 3 817 | 20 |

10. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--|------------------|------------------|
| Հունվարի 1-ի դրությամբ | 1 836 836 | 1 326 711 |
| Տարվա ընթացքում ստացված | 60 173 | 446 237 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներից վերադասակարգված | 213 278 | 452 265 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված | (339 361) | (388 377) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1 770 926 | 1 836 836 |

Եկամուտներին վերաբերող շնորհներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--|----------------|----------------|
| Հունվարի 1-ի դրությամբ | 519 335 | 761 147 |
| Տարվա ընթացքում ստացված | 457 411 | 885 130 |
| Տարվա ընթացքում վերադարձված | (35) | (2 173) |
| Ակտիվներին վերաբերող շնորհներին վերադասակարգված | (213 278) | (452 265) |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված | (477 776) | (672 504) |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 285 657 | 519 335 |

11. Անևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|--|---------------------------------------|---------------------------------------|
| Կրեդիտորական պարտք գնումների գծով | 142 785 | 131 175 |
| Ստացված կանխավճարներ | 9 667 | 3 237 |
| Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով | 18 928 | 16 836 |
| Պարտքեր աշխատավարձի գծով | 18 940 | 21 569 |
| Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով | 213 | - |
| | 190 533 | 172 817 |

12. Պահուստներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|--------------------------------------|---------------------------------------|---------------------------------------|
| Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ | 49 031 | 41 164 |
| | 49 031 | 41 164 |

13. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--------------------------------------|----------------|----------------|
| Ապրանքների վաճառքից հասույթ | 7 552 | 27 941 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 882 356 | 693 164 |
| | 889 908 | 721 105 |

Վաճառքի ինքնարժեք

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--|------------------|------------------|
| Նյութական ծախսումներ | 222 846 | 154 157 |
| Աշխատավարձ և հատուցումներ | 786 111 | 647 790 |
| Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգման և սպասարկ. ծախսեր | 232 046 | 289 143 |
| Գործուղման ծախսեր | 677 | - |
| Այլ ծախսումներ | 7 469 | 14 981 |
| | 1 249 149 | 1 106 071 |

14. Իրացման ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--------------------------------------|---------------|---------------|
| Աշխատավարձ և հատուցումներ | 18 726 | 21 990 |
| Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր | - | 541 |
| Մարկետինգի և գովազդի ծախսեր | 60 | 476 |
| Իրացման այլ ծախսեր | 412 | 101 |
| | 19 198 | 23 108 |

15. Վարչական ծախսեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|--------------------------------------|----------------|----------------|
| Աշխատավարձ և հատուցումներ | 142 599 | 138 272 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 113 405 | 124 260 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 5 658 | 15 302 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 2 801 | 2 286 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 39 | 1 543 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 13 600 | 12 552 |
| Բանկային ծառայության գծով ծախսեր | 477 | 561 |
| Զվիճիսհատուցվող հարկերից ծախսեր | 24 673 | 38 772 |
| Վարչական այլ ծախսեր | 2 830 | 3 368 |
| | 306 082 | 336 916 |

16. Այլ եկամուտ և ծախսեր

Այլ եկամուտ

| | 2023թ | 2022թ |
|--|----------------|------------------|
| Հազար ՀՀ դրամ | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ | 339 361 | 388 377 |
| Ծնորհներից և այլ անհատույց ստացումներից եկամուտներ | 477 776 | 672 504 |
| Այլ եկամուտ | 5 215 | 1 259 |
| | 822 352 | 1 062 140 |

Այլ ծախսեր

| | 2023թ | 2022թ |
|--|----------------|----------------|
| Հազար ՀՀ դրամ | | |
| Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր | 107 062 | 279 002 |
| Արձակուրդային պահուստաֆոնդին հատկացում | 7 867 | 30 902 |
| Այլ | 15 598 | 15 336 |
| | 130 527 | 325 240 |

17. Այլ օգուտներ և կորուստներ

Այլ օգուտ

| | 2023թ | 2022թ |
|---------------------------------------|--------------|--------------|
| Հազար ՀՀ դրամ | | |
| Փոխարժեքային տարբերություններից օգուտ | 21 | 102 |
| Տոկոսային եկամուտ | 303 | 4 433 |
| Հիմնական միջոցների օտարումից եկամուտ | - | 2 635 |
| | 324 | 7 170 |

Այլ կորուստ

| | 2023թ | 2022թ |
|---|---------------|--------------|
| Հազար ՀՀ դրամ | | |
| Փոխարժեքային տարբերություններից կորուստ | 11 550 | 3 847 |
| Տոկոսային ծախսեր | 3 366 | - |
| Հիմնական միջոցների օտարումից ծախսեր | 963 | 3 381 |
| | 15 879 | 7 228 |

18. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

| | 2023թ | 2022թ |
|--|--------------|----------------|
| Հազար ՀՀ դրամ | | |
| Ընթացիկ շահութահարկ՝ | | |
| Ընթացիկ շահութահարկի գծով ծախս | 2 675 | 1 900 |
| Հետաձգված հարկեր | | |
| Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում | (1 416) | (5 366) |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ) | 1 259 | (3 466) |

19. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

| Հազար ՀՀ դրամ | Հետաձգված հարկային ակտիվներ | | Հետաձգված հարկային պարտավորություններ | | Չուտ հետաձգված հարկ | |
|--------------------------------------|-----------------------------|--------------|---------------------------------------|----------|---------------------|--------------|
| | 2023թ | 2022թ | 2023թ | 2022թ | 2023թ | 2022թ |
| Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ | 8 825 | 7 409 | - | - | 8 825 | 7 409 |
| Ընդամենը | 8 825 | 7 409 | - | - | 8 825 | 7 409 |

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

| Հազար ՀՀ դրամ | 2022թ հունվարի 1-ի դրությամբ | Եկամտում ճանաչված | 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ | Եկամտում ճանաչված | 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|--------------------------------------|------------------------------|-------------------|---------------------------------|-------------------|---------------------------------|
| Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ | 2 043 | 5 366 | 7 409 | 1 416 | 8 825 |
| Չուտ հետաձգված հարկ | 2 043 | 5 366 | 7 409 | 1 416 | 8 825 |

20. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

Ֆինանսական գործիքների կատագորիաներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ դեկտեմբերի 31 | 2022թ դեկտեմբերի 31 |
|---------------------------------------|---------------------|---------------------|
| <i>Ֆինանսական ակտիվներ</i> | | |
| Տրված փոխառություններ | 236 | 86 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 146 576 | 194 571 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 37 260 | 98 934 |
| | 146 812 | 194 657 |
| <i>Ֆինանսական պարտավորություններ</i> | | |
| Ստացված վարկեր և փոխառություններ | 95 839 | 20 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 190 533 | 172 817 |
| | 286 372 | 172 837 |

21. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խումբն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Խմբի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Խմբի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և բանկային ավանդների հետ: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Խումբը չի ունեցել արտարժույթային ռիսկի ենթակա նշանակալի ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Խումբը չի ունեցել տոկոսային ռիսկի ենթակա ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Խմբի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Խմբի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Խմբի համբավը վտանգելու:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Խմբի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում է շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չզրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա) Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տղի է ունենում:

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

22. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ի ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- ✦ *Ծանոթագրություն 3.1 և 4 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*
- ✦ *Ծանոթագրություն 3.2 – ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը*
- ✦ *Ծանոթագրություն 19– հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

23. Պայմանականություններ

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում:

Խումբը գտնում է, որ 2023թ ղեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը պատշան կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Խումբի հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

Ապահովագրություն

Խումբն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրերդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Կազմակերպության տարածքում տեղ ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ մարդկանց առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Զանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ մարդկանց առաժողջության հասցված վնասը, որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Դատական վարույթներ
Խումբը ներգրավված չէ դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր
ֆինանսական վիճակի վրա:


24. Գործարքներ կապակցված կողմերի միջև


ՀԿ-ի և դուստր ընկերության միջև կատարված գործարքները փոխբացառվել են համախմբված
ֆինանսական հաշվետվություններում:

Հանգույցային կառավարչական անձնակազմը մեկն է՝ նախագահը, որին հաշվետու
ժամանակաշրջանում հատուցումներ չեն տրվել:

25. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2023թ) մինչև համախմբված ֆինանսական
հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Գործադիր տնօրեն՝ 
Լ. Մինասյան



Հաշվապահական հաշվառման
ծառայություններ մատուցող ընկերության
ներկայացուցիչ՝
Լ. Հովհաննիսյան 